

մախօսի կառուցած շէնքերը 15 Յուլիս 1099ին յաղթապանձ Սա-  
չակիրներու ուրախութեան արցունքները և յաղթանակի երգերը  
ընդունեցին :

Քրիստոսի Չարչարանաց և Յարութեան սրբավայրերը տրա-  
մաբանօրէն երկու դասակարգ շէնքերու կը բաժնուէին . Ս. Գե-  
րեզմանը և անոր յարամասերը , Գողգոթան և յարակից մասերը :

Մենք՝ ըստ մեր նիւթին , նախ պիտի բացատրենք այս թը-  
ւականին վերանորոգուած Գողգոթայի եկեղեցին և յետոյ պիտի  
նկարագրենք հայկական յիշատակները նոյն եկեղեցիի վերաբե-  
րութեամբ : Գողգոթան միշտ ցոյց կը տրուի Ս. Յարութեան ե-  
կեղեցիին արեւելքը , համաձայն միևնոյն մերձաւոր հաստատու-  
մին՝ որ սրբավայրերու պատմութեան նախընթաց չըջաններուն  
մէջ յիշատակուած է : Ան Ս. Գերեզմանի մեծ եկեղեցիէն դուրս  
առանձին փոքրիկ շէնք մըն էր : Վերնայարկ աղօթարանը , որ  
կը ծածկէր Սաչելութեան ժայռը , զարդարուած էր գեղեցիկ մո-  
զայիքներով որ կը ներկայացնէին Սաչեալ Քրիստոսը իր ձախը  
ունենալով իր մայրը և աջը՝ Ս. Յովհաննէսը : Մէկ կողմէն հա-  
րիւրապետը իր գեղարդովը կը ծակէ Յիսուսի կողը , մինչ ուրիշ  
կողմէն զինուոր մը եղէգի մը ծայրը անցուցած և քացախով լեցուած  
սպունգը կը ներկայացնէ : Ժայռին զազաթը բաց թողուած էր ,  
որպէս զի հրաշալի պատուուածքները երեւնային : Ստորնայարկ  
մատուռը մասամբ մը փորուած էր լերան ժայռին մէջ և Արեւմուտք-  
ցիները կը կոչէին զայն Գողգոթա , իսկ Արեւելքցիները նախամե-  
ծարութեամբ Տեղի Կառախեղոյ (Cranion) կ'անուանէին զայն ,  
որպէս զի վերնայարկ եկեղեցիին վերապահէն Գողգոթա անունը :

Սաչակրաց պատմիչ Տիւրոսի արքեպս. , Կիլեօմ Տիւրացի ,  
հետեւեալ կերպով կը նկարագրէ Գողգոթայի մասին Սաչակիրնե-  
րու կատարած փոփոխութիւնները . «Լատիններու զբաւումէն  
առաջ Գողգոթան , կենդանարար Սաչափայտին գիւտին տեղը ,  
Պատանատեղին , Հրէից սովորութեան համաձայն , Ս. Յարու-  
թեան եկեղեցիին շրջաբակէն դուրս կը մնային , բայց երբ մերին-  
ները (Սաչակիրք) , ողորմութեամբ Աստուծոյ քաղաքը զբաւեցին  
զօրաւոր քազկաւ (in manu forti) , նոյն շէնքը իրենց խիստ նեղ երե-  
ւեցաւ : Նախկին եկեղեցիին վրայ աւելցուցին հաստատուն եւ  
խիստ բարձր շինուածք մը , որ հին մասերը ամփոփելով միևնոյն  
շէնքին մէջ կը բովանդակէր խնդրոյ նիւթ եղող տեղերը» : Պատ-